ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«28» հուլիսի 2025թ. № 638

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,1000 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԻԳՐԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ ԳՅՈՒԼԲԱՆԳՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, 0,07071 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Տիգրան Գուրգենի Գյուլբանգյանի կողմից տիրապետվող՝ Սպիտակ համայնքի Գեղասար բնակավայրում գտնվող, 06-028-0020-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,17071 հեկտար մակերեսով հողամասի 0,1000 հեկտարը Տիգրան Գուրգենի Գյուլբանգյանին կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, իսկ 0,07071 հեկտարը՝ ուղղակի վաճառքի միջոցով, նշված հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1992 թվականին կառուցված բնակելի տան նկուղը, բնակելի տան 1-ին հարկը և աստիճանահարթակը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ՎԱՆԱՁՈՐԻ ՆԱԽԱԳԾՈՂ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06042TL5KZX4) և Տիգրան Գուրգենի Գյուլբանգյանի (ծնված՝ 16.06.1959 թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Օրենքի ուժով ճանաչել Տիգրան Գուրգենի Գյուլբանգյանի սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-028-0020-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի

կառուցապատման գործառնական նշանակության 0,1000 հեկտար մակերեսով հողամասի և 86,7 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան նկուղի, 78,8 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 12,7 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակի նկատմամբ:

2. Տիգրան Գուրգենի Գյուլբանգյանի կողմից տիրապետվող 0,17071 հեկտար հողամասից ավել օգտագործվող 0,07071 հեկտար մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ ընդամենը 154 006,38 ՀՀ դրամ (1 քմ 217,8 ՀՀ դրամ) ուղղակի վաճառքի միջոցով օտարել Տիգրան Գուրգենի Գյուլբանգյանին:

3. Տիգրան Գուրգենի Գյուլբանգյանի կողմից տիրապետվող 06-028-0020-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,17071 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինությանը տրամադրել «Սպիտակ համայնք, գ. Գեղասար, 1-ին փողոց, 11 բնակելի տուն» հասցեն:

4. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-028-0020-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,17071 հեկտար հողամասի և շինության հատակագիծը:

5. Տիգրան Գուրգենի Գյուլբանգյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հուլիսի 28
ք.Սպիտակ